

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ՔԵԹԻ ՀԱՄԱՅՆՔԻ
2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄ, ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ...

2. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԻ, ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԶՀԾ-Ի ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

3. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ (ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ) ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ, ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼ ԾՐԱԳՐԵՐԻՈՒՄ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ.....

4. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄ, ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ.....

5. ՀԱՄԱՅՆՔԻ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԻ ԿԱԶՄՈՒՄ ԵՎ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ, ՖԻՆԱՆՍԱՊԵՍ ԱՊԱՀՈՎՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԱՍՓՈՓՈՒՄ, ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՅԹԱՅԹՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ.....

6. ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ (ՇԵՆՔԵՐԻ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԵՎ ԱՅԼՆ) ԿԱՌԱՎԱՐՄԱՆ (ՕՏԱՐՄԱՆ, ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ) ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ.....

7. ՀԶՀԾ-Ի ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ, ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ (ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ) ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ, ՎԵՐԱՀՄԿՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՆԱՑՈՒՄԸ.....

ԵԶՐԱՓՈՎՈՒՄ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՔԵԹԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ.....

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՔԵԹԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿԸ ԵՎ ՎԻՃԱԿԸ.....

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՔԵԹԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԱՌԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԻՃԱԿԸ.....

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՔԵԹԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՈՉ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՔԵԹԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՐԸ.....

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՔԵԹԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ ԱՆԱՄՆԱԳԼԽԱՔԱՆԱԿԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ.....

ՀԱՎԵԼՎԱԾ 7. ՔԵԹԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ՝ ՀԱՄԱՅՆՔԱԲՆԱԿՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐՆ ՈՒ ՔԱՆԱԿՆԵՐԸ.....

ՀԱՎԵԼՎԱԾ 8. Քեթի ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ, ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԵՎ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....

ՀԱՎԵԼՎԱԾ 9. Քեթի ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄՆԵՐՆ ԸՍՏ
ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԻ

ՀԱՎԵԼՎԱԾ 10. Քեթի ՀԱՄԱՅՆՔԻ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ ԻԱՌԱՆՁԻՆ
ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄՆԵՐՆ ԸՍՏ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԻ.....

ՀԱՎԵԼՎԱԾ 11. Քեթի ՀԱՄԱՅՆՔԻ ՀԶՀԾ-Ի ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ՝ ԸՍՏ ՏԻՄ-ԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁԻՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ.....

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Շիրակի մարզի Քեթ համայնքի 2017-2021 թթ. զարգացման ծրագիրը (այսուհետ՝ ՀԶԾ) մշակելիս հաշվի է առնվել, որ համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 6-ին փոփոխված ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի, ՏԻՄ-երը՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, ընտրվում են հինգ տարի ժամկետով, և 210-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը պետք է համապատասխանեցվի Սահմանադրությանը և ուժի մեջ մտնի 2017 թվականի հունվարի 1-ից: Հաշվի առնելով այդ պահանջները՝ մշակվել է համայնքի զարգացման ոչ թե քառամյա, այլ հնգամյա ծրագիր:

ՀԶԾ մշակվել է հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասություններն ու լիազորությունները նրանց գործունեության բնագավառներում (ոլորտներում), ՀԶԾ-ի մշակման և կառավարման վերաբերյալ համապատասխան հոդվածների դրույթները և ծրագրային հիմքերը:

Ներկայացվող ՀԶԾ-ն առաջիկա հինգ տարիների համար հանդիսանալու է Քեթինհամայնքի զարգացման հիմնական փաստաթղթերից մեկը: ՀԶԾ -ի բովանդակությունը պայմանավորված է ՀԶԾ -ի մշակմանը մասնակից համայնքի աշխատանքային խմբի (այսուհետ՝ ՀԱԽ-ի) կողմից կատարված աշխատանքով և առաջարկներով, համայնքի ռեսուրսային (մարդկային, գույքային, ֆինանսատնտեսական, տեխնիկական և այլ) հնարավորություններով, համայնքային ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և ենթակառուցվածքների առկայությամբ: ՀԶԾ-ում հնարավորինս հաշվի են առնվել համայնքում հանրային ծառայությունների մատչելիության և հասանելիության, նոր ծառայությունների մատուցման և դրանցով պայմանավորված լրացուցիչ ծախսեր առաջանալու խնդիրները: ՀԶԾ-ն մշակելիս որպես կողմնորոշիչ են դիտարկվել համայնքի զարգացնելու անհրաժեշտությունը, համայնքի տարածքում տնտեսական գործունեության խրախուսման առկա հնարավորությունները, տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման (հատկապես՝ գյուղատնտեսության, փոքր և միջին բիզնեսի, տուրիզմի և այլնի) հնարավորությունները, արդյունավետ կառավարման իրականացումը: ՀԶԾ -ն մշակվել է մասնակցային եղանակով՝ հաշվի առնելով համայնքի շահագրգիռ բոլոր կողմերի առաջարկությունները: Հարցումների միջոցով վեր են հանվել համայնքի բնակիչներին հուզող խնդիրները, դրանք գնահատվել են համայնքային ժողովների ժամանակ ՀԱԽ-ի կողմից և դասակարգվել ըստ առաջնահերթության: Վեր հանված հիմնախնդիրների հիման վրա, ելնելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներից, համայնքի ղեկավարը՝ համայնքի աշխատակազմի և համայնքի ղեկավարին կից գործող տարեկան բյուջեի ու ՀԶԾ-ի մշակման խորհրդակցական մարմնի(ԽՄ) հետ միասին մշակել է համայնքի 2017-2021թթ. ՀԶԾ-ն, որը քննարկվել և հաստատվել է համայնքի ավագանու կողմից և դրվել է գործողության մեջ:

Համայնքի 2017-2021թթ. ՀԶԾ-ն ներկայացնում է Քեթի համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման,

Ֆինանսական և տնտեսական ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծում և նպատակային բյուջետավարման գործընթացի իրականացում: ՀԶԾ-ն ներառում է նաև Քեթի համայնքի ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի բաղադրիչները: Այն Քեթի համայնքի ներդաշնակ և համաչափ զարգացման, Քեթիի բնակիչների բարեկեցության ապահովման համար առաջիկա հինգ տարիներին ընդունված ծրագիր է, որը հանդիսանալու է համայնքի ամենօրյա փաստաթուղթը:

ՀԶԾ-ն մշակելիս ուսումնասիրվել են նաև համայնքի նախորդ քառամյա ժամանակաշրջանի զարգացման միտումները և դրանց շարունակականության հավանականությունը:

ՀԶԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմինը, փաստաթուղթը մշակելիս, հատուկ ուշադրություն է դարձրել և ձգտել, որպեսզի այն հնարավորինս համահունչ լինի գործողության մեջ դրված ՀՀ ռազմավարական, մարզային և տարածաշրջանային զարգացման ծրագրերին՝ ակնկալելով ՀՀ պետական կառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների հետ լիակատար փոխըմբռնում ՀԶԾ-ում ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցություն դրանց լուծման գործում:

ՀԶԾ-ի 1-ին բաժնում ներկայացվում է համայնքի սոցիալ-տնտեսական ընդհանուր և ոլորտային փաստացի իրավիճակի և համայնքի կողմից մատուցվող ծառայությունների բնութագրումը և վերլուծությունը: Բաժնում ներառվել է նաև համայնքի ՈՒԹՀՎ-վերլուծությունը՝ հիմնվելով համայնքի իրավիճակի վերլուծության ու գնահատման արդյունքների վրա և ձևակերպելով համայնքի ուժեղ և թույլ կողմերը, զարգացման ներքին ու արտաքին հիմնական հնարավորությունները, համայնքին սպառնացող հիմնական վտանգները:

ՀԶԾ-ի 2-րդ բաժնում սահմանվում են համայնքի երկարաժամկետ տեսլականը, թե ինչպիսին ենք ցանկանում տեսնել մեր համայնքը ապագայում, ռազմավարությունը և ՀԶԾ-ի հիմնական նպատակները:

ՀԶԾ-ի 3-րդ բաժնում ներկայացվում են պետության և միջազգային դոնոր կազմակերպությունների հետ համայնքում գալիք հինգ տարիների ընթացքում նախատեսվող (շարունակվող) համագործակցության ուղղությունները:

ՀԶԾ-ի 4-րդ բաժնում ներկայացվում են համայնքի ֆինանսական վիճակի վերլուծությունը, գնահատումը և կանխատեսումը՝ ըստ համայնքի բյուջեի եկամտային ուղղությունների (սեփական եկամուտներ, պաշտոնական տրանսֆերտներ, փոխառու միջոցներ)՝ դիտարկելով նախորդ երկու և գալիք հինգ տարիների եկամտային ցուցանիշները:

ՀԶԾ-ի 5-րդ բաժնում ներկայացված են համայնքի զարգացման ծրագրերը: Դրանք գնահատվել են ըստ սահմանված չափորոշիչների և սահմանվել են առաջնահերթություններ: Ամփոփ ձևով ներկայացվել են առաջնահերթ այն ծրագրերը, որոնք մոտավոր հաշվարկներով ակնկալվում է, որ հնարավոր կլինի իրականացնել կանխատեսվող ֆինանսական միջոցներով: Գալիք հինգ տարիների ընթացքում իրականացման ենթակա ծրագրերը ձևակերպվել են՝ օգտագործելով ծրագրերի կազմման օրինակելի ձևը, ինչպես նաև

ներկայացնելով ծրագրերի ֆինանսավորման աղբյուրները (համայնքի բյուջե, ՀՀ պետական բյուջե, դոնոր կազմակերպություններ, այլ) և դրանց մոտավոր արժեքներն՝ ըստ գալիք հինգ տարիների:

ՀԶՀԾ-ի 6-րդ բաժնում ներկայացվում է համայնքի սեփականություն համարվող շենքերի ու շինությունների, հողամասերի կառավարման (օտարման, վարձակալության տրամադրման) հնգամյա ծրագիրը:

ՀԶՀԾ-ի 7-րդ բաժնում ներկայացվում է ՀԶՀԾ-ի իրականացումը, մշտադիտարկումը (մոնիթորինգը) և գնահատումը, վերահսկումը և վերանայումը:

ՀԶՀԾ-ի եզրափակում բաժնում ներկայացվում են համառոտ մոտեցումներ՝ ՀԶՀԾ-ի իրականացման, վերահսկման և գնահատման, ծրագրերի իրականացման արդյունքների քննարկման, ՀԶՀԾ-ում փոփոխությունների և (կամ) լրացումների կատարման գործընթացների վերաբերյալ:

ՀԶՀԾ-ի հավելվածներ բաժնում ներկայացվում է մանրամասն և լայնածավալ տեղեկատվություն տարբեր հարցերի վերաբերյալ, ինչպիսիք են համայնքի հիմնական ցուցանիշների՝ գալիք հինգ տարիների կտրվածքով գնահատում և կանխատեսում, համայնքի ոլորտային ծրագրերի՝ ըստ ծրագրերի օրինակելի ձևի ձևակերպումներ և այլն:

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄ, ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

1.1 ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Քեթի գյուղը գտնվում է Շիրակի լեռանշղթայի հարավային մասում: Իր հողային տարածքով սահմանակից է հարավային մասով Շիրակի մարզի Մայիսյանի հողատարածքներին, հյուսիսային մասով Շիրակի մարզի Հոդմիկ, Գոգհովիտ, Թորոսգյուղ և Փոքրաշեն իսկ արևելյան մասով Կարմրաքարի և Հացիկի հողատարածքներին, արևմտյան մասով սահմանակից է Հովունիի և Մայիսյան համայնքների հողատարածքներին:

Համայնքի տարածքում տարեկան տեղումների քանակը կազմում է 350-450 մմ: Ամենացածր ջերմաստիճանը եղել է -35°C , իսկ ամենաբարձրը՝ $+33^{\circ}\text{C}$:

Գյուղն ունի կտրտված ռելիեֆ: Այն ծովի մակերևույթից բարձր է 1720մ: Ամենաբարձր ջերմաստիճանը, որը նկատվում է հուլիսի վերջին տասնօրյակին և օգոստոսին կազմում է մոտ $+30^{\circ}$ $+35^{\circ}\text{C}$: Ունի խստաշունչ ձմեռ, ամենացածր ջերմաստիճանը հունվար ամսին կազմում է -30° - -35°C :

Ջերմաստիճանային տատանման ամպլիտուտը կազմում է $+35^{\circ}\text{C}$ -ից -27°C :

Կլիման խիստ ցամաքային է, որպես խմելու ջուր օգտագործում են Շիրակի լեռնաշղթայի հարավային ստորոտներում կուտակված աղբյուրների ինչպես նաև Աշոցքի սարահարթից կենտրոնացված ջրամատակարարման ջուրը: Ոռոգելի վարելահողերը կազմում են 220 հա, սակայն ցանցի քայքայվածության պատճառով փաստացի ոռոգվում են ընդամենը 20 հա: Հաշվարկված է, որ 1993թվականից մինչև այսօր տարեկան մթնոլորտային տեղումների միջինը կազմում է 450մմ 460մմ, առավելապես գարնան ամիսներին:

Տարածքում գերակշռում են լեռնատափաստանային սևահողերը: Հարուստ է տուֆի, գրանիտի հանքաքարերով, ավազով ու կավով:

Հողատարածքները մշտապես վտանգված են կարկտահարությամբ և տևական երաշտով: Տարածքը գտնվում է ուժեղ սեյսմիկ գոտում: Հիշարժան են 1926 և 1988թթ. աղետալի երկրաշարժերը:

Համայնքի վարչական տարածքը կազմում է 1753.05 հա, որից գյուղատնտեսական նշանակության հողեր են 1540.5 հա, այդ թվում 668.0 հա վարելահող, 719.47հա արոտ և 130.32 հա գյուղատնտեսական այլ հողատեսքեր: Ջրային ֆոնդի հողերը կազմում են 0.8 հա: Համայնքի կառուցապատված տարածքը զբաղեցնում է 59.8 հա.:

Բնակավայրը գտնվում է նախկին շրջկենտրոնից 15 կմ, մարզկենտրոնից 8 կմ և մայրաքաղաքից՝ 135 կմ հեռավորության վրա: Բնակավայրի միջով է անցնում Երևան-Գյումրի-Բավրա-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհը:, Բնակավայրը Մայիսյանի երկաթուղային կայարանից գտնվում 3 կմ հեռավորության վրա:

1.2 ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Պատմական տեղեկությունների համաձայն գյուղը ձևավորվել է 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմից հետո:

Բնակչության նախնիները գաղթել են Արևմտյան Հայաստանի Ալաշկերտի, Բուլանըղի, Մուշի, Էրզրումի շրջաններից, իսկ մնացած մասը 1915 թվականի եղեռնի պատճառով ներգաղթել են Ղարսի նահանգի, Մուշ և Տարոն գավառների բնակավայրերից: 1842 թ-ին գյուղն ունեցել է 209, 1897 թ-ին՝ 976, 1926 թ-ին՝ 528, 1939 թ-ին՝ 935, 1959 թ-ին՝ 862, 1979թ-ին 807,1989 թ-ին՝ 825, 1999թ-ին 1146, 2009թ-ին 1170 բնակիչ,

Քեթի գյուղը ներկայումս կազմված է երկու մասից՝ հին և նոր թաղամասերից: Նոր թաղամասը կառուցվել 1988թ-ի ավերիչ երկրաշարժից հետո:

Քեթի գյուղը ամենաշատ բնակչություն՝ մոտ 1270 բնակիչ ունեցել է 1986 թվականին:

Վերջին 30 տարիներին համայնքի բնակչության թիվը նվազել է մոտ 200 մարդով, նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների թիվը նվազել է կրկնակի չափով և արձանագրվել է բնակչության կազմի ծերացում: Ներկայումս համայնքի աշխատունակ բնակչության 40-50 տոկոսը մեկնում են արտագնա սեզոնային աշխատանքի:

Քեթի համայնքի բնակչությունը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է 1097 մարդ (աղյուսակ 2):

**Աղյուսակ 2. Համայնքի բնակչության ու տնային տնտեսությունների ցուցանիշները
(01.01.2016 թ. դրությամբ)**

Հ/հ	Համայնք	Մշտական բնակչության թվաքանակը	Մշտական տնային տնտեսությունների թվաքանակը	Առկա տնային տնտեսությունների թվաքանակը
1.	Քեթի	1170 մարդ	321 տ/տ	296 տ/տ.

Համայնքի առկա բնակչության թիվը կազմում է 1097 մարդ, այդ թվում տղամարդիկ՝ 534 և կանայք՝ 563: Համայնքի բնակչության տարիքային և սոցիալական կազմը ներկայացված է աղյուսակ 3-ում:

**Աղյուսակ 3. Համայնքի առկա բնակչության տարիքային և սոցիալական կազմի ցուցանիշները
(01.01.2016 թ. դրությամբ)**

Հ/հ	Ցուցանիշները	Ընդամենը համայնք
1.	Առկա բնակչության թիվը, այդ թվում՝	1168
	Տղամարդիկ	540
	Կանայք	628
	0-4 տարեկան	56
	5-6 տարեկան	
	7-10 տարեկան	
	11-14 տարեկան	
	15-17 տարեկան	
	18-22 տարեկան	
	23-45 տարեկան	
	46-62 տարեկան	
	63 և բարձր տարիքի	103
2.	Կենսաթոշակառուներ, այդ թվում՝	
	Տարիքային և աշխատանքային	
3.	Փախստականներ	
4.	Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	
5.	Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ	

6.	Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ	
7.	Արցախյան պատերազմի մասնակիցներ	
8.	Հաշմանդամներ, այդ թվում՝ Մանկուց հաշմանդամներ	
9.	Աշխատունակներ	
10.	Զբաղվածներ	
11.	Գործազուրկներ	
13.	Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը	
14.	Արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքների թիվը	
15.	Բնակարանի կարիքավոր ընտանիքների թիվը, այդ թվում՝ Անօթևան ընտանիքներ	
16.	Բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքների թիվը	
17.	Արտագնա աշխատանքի մեկնող ունեցող տնային տնտեսությունների թիվը	
18.	Արտագնա (սեզոնային) աշխատանքի մեկնողների թիվը	

1.3 ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Քեթի համայնքում տեղական ինքնակառավարումն իրականացնում են ընտրությունների արդյունքում ձևավորված տեղական իշխանությունը՝ համայնքի ղեկավարը և ավագանին իր 5 անդամներով: Քեթի համայնքի աշխատակազմը բաղկացած է 8 աշխատակցից:

Համայնքապետարանը չունի վարչական շենք և տեղակայված է գյուղի կենտրոնում գտնվող բուժ կետի մի մասում: Շենքի ընդհանուր վիճակը լավ է, աշխատակազմի համար պայմանները լավ են, կահավորանքը նորացված է: Համայնքապետարանը մեծ մասամբ հազեցած է տեխնիկայով, որը լիովին բավարար չէ աշխատակազմի լիարժեք գործունեությունն ապահովելու համար: Համայնքի ղեկավարի վարձատրության չափը, համայնքի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատվել են համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 31 և թիվ 32 որոշումներով (աղյուսակ 4):

Աղյուսակ 4. Քերթի համայնքի աշխատակազմը

Հ/հ	Պաշտոնի անվանումը (համայնքային ծառայության պաշտոնների մասով նաև ծածկագիրը)	Հաստիքների քանակը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը (ՀՀ դրամ)
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ				
1.	Համայնքի ղեկավար	1	1	264560
2.	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	1	144000
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ				
3.	Աշխատակազմի քարտուղար (1.2-1)	1	1	200000
4.	Առաջատար մասնագետ-հաշվապահ (3.1-1)	1	1	156000
5.	1-ին կարգի մասնագետ (3.2-1)	1	1	138000
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ				
6.	Համակարգչային օպերատոր	1	1	144000
7.	Գրադարանավար	1	0.5	85000
8.	Հավաքարար	1	1	80000
9.	Պահակ	1	0.5	75000
	Ընդամենը	9		1256.56

1.4 ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Համայնքի սեփականությունն են հանդիսանում համայնքի սեփականություն համարվող գույքը, որի ցանկը սահմանվել է ՀՀ կառավարության 14.03.1997թ. թիվ 51 որոշմամբ:

Համայնքի սոցիալ-տնտեսական յուրաքանչյուր ենթակառուցվածքի վիճակի գնահատումը կատարվել է՝ օգտագործելով Ներդիր 1-ում բերված գնահատման չափանիշները (գնահատականները):

Ներդիր 1. Համայնքի սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքի վիճակի գնահատականներ
ա) գերազանց, եթե ենթակառուցվածքը վերջերս է կառուցվել կամ վերանորոգվել, գործում է անխափան.
բ) լավ, եթե ենթակառուցվածքն իր շահագործմանը խոչընդոտող լուրջ թերություններ չունի.
գ) բավարար, եթե ենթակառուցվածքը դեռևս գործում է, բայց արդեն կապիտալ նորոգման կարիք ունի.
դ) վատ, եթե ենթակառուցվածքը գործում է ամենացածր արտադրողականությամբ կամ բոլորովին չի գործում.
ե) շատ վատ, եթե ենթակառուցվածքը քայքայված է, այն պետք է քանդել կամ փոխարինել ուրիշով:

Հավելված 2-ում բերված է 01.12.2016թ. դրությամբ համայնքի սեփականություն համարվող գույքի ցանկը և վիճակը: Ի լրումն նշյալ ցանկի, բերված է նաև համայնքի սոցիալ-տնտեսական հիմնական ենթակառուցվածքների առկայությունը և վիճակը:

Հավելված 3-ում ամփոփ ձևով ներկայացված է համայնքի սոցիալ-տնտեսական հիմնական ենթակառուցվածքների առկայությունը և ընդհանուր վիճակը:

1.5 ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՈՉ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Քեթի համայնքի վարչական տարածքում գործող ոչ համայնքային ենթակայության կազմակերպությունները իներկայացված են **հավելված 4**-ում: Նշված կազմակերպությունների հետ ՏԻՄ-երի համագործակցությամբ արվում է ամենհնարավոր ըսվյալ ոլորտներում ծառայությունների արդիականացման և արդյունավետության բարձրացման նպատակով:

1.6 ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքից աղբը տեղափոխվում է կենտրոնացված աղբավայր: Աղբահանումն իրականացվում է անհատ ձեռներեցի աղբատար մեքենայով՝ համապատասխան պայմանագրի հիման վրա: Փողոցներում տեղադրված են 25 աղբամաններ:

Համայնքը չունի գլխավոր հատակագիծ:

Համայնքի տարածքում գիշերային (արտաքին) լուսավորության ցանցը ապահովում է համայնքի անհրաժեշտ գիշերային լուսավորության ծածկույթի 95 %-ը:

Խմելու ջրի մատակարարումը իրականացվում է կենտրոնացված եղանակով շուրջօրյա գրաֆիկով և սպասարկվում է օպերատորի կողմից: Իսկ հյուսիս-արևելյան թաղամասի մի մասի ջրամատակարարումը իրականացվում է տեղական աղբյուրներից:

Համայնքում առկա է նոր գերեզմանատան ցանկապատման խնդիր:

Համայնքը գազաֆիկացված է, սակայն ներքին բաշխիչ ցանցը ամբողջությամբ չի կառուցվել, որի պատճառով շատ տներ և դպրոցը զրկված են գազաֆիկացման հնարավորությունից:

1.7 ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Համայնքում բնակելի տները հիմնականում առանձնատներ են, որոնց թիվը կազմում է 220: (աղյուսակ 11):

Քեթի համայնքում բնակֆոնդի վիճակը, ընդհանուր առմամբ, գնահատվում է բավարար: Կառուցված առանձնատները հիմնականում 1970-1980-ականների կառույցներ են,ինչպես նաև 1988թ-ի երկրաշարժից հետո հիմնականում նոր կառուցված և վերակառուցված ,պարբերաբար վերանորոգումներով գտնվում են լավ վիճակում:Կան նաև վթարային տներ:

Աղյուսակ 11. Համայնքի բնակելի առանձնատների թիվը

Հ/հ	Համայնք	Բնակելի առանձնատների	
		թիվը	ընդհանուր մակերեսը
1.	Քեթի	220	մոտ 35000 քմ

1.8 ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Համայնքի վարչական տարածքը կազմում է 1753.1 հա, որից գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 1540.28 հա, բնակավայրերի հողերը՝ 92.79 հա, արտադրական նշանակության հողերը՝ 57.36 հա, էներգետիկայի, տրանսպորտի և կապի, կոմունալ ենթակայության հողերը՝ 5.38 հա, հատուկ պահպանության հողերը՝ 52.29 հա, հատուկ նշանակության հողերը՝ 4.09 հա և ջրային հողերը՝ 0.86 հա:

1991 թվականին հանրապետությունում իրականացված հողի սեփականաշնորհման ժամանակ համայնքի սեփականաշնորհված հողերի մեկ հողաբաժնի չափը կազմում է 1.4 հա, որից անջրդի վարելահող 0.9հա, ջրովի վարելահող և տնամերձ հողամաս 0.5հա:

1.9 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքի սեփականաշնորհված և վարձակալությամբ տրված վարելահողերում ցանվում են հացահատիկային մշակբույսեր՝ ցորեն, գարի և այլ կուլտուրաներ:Սակայն հողատարածքների ջրովի չլինելուպատճառով համայնքաբնակները մեծեկամուտներ չեն ստանում: Հողատեսքերի դիրքադրությունը միանգամայն բարենպաստ է հացահատիկային կուլտուրաների արտադրության ու անասնապահության համար: Հացահատիկային կուլտուրաների արտադրությունն ու անասնապահությունը հանդիսանում են Քեթի համայնքի տնտեսական զարգացման կանխորոշող ոլորտ: Սակայն այս երկու ոլորտները

ներկայումս ունեն միջին զարգացվածության տեմպ, որը պայմանավորված է ոլորտների ցածր կապիտալացման աստիճանով ու վերամշակման տեխնոլոգիաների բացակայությամբ:

Համայնքաբնակները զբաղվում են նաև անասնապահությամբ, սակայն խոշոր ֆերմերային տնտեսությունները սակավաթիվ են: Հիմնականում յուրաքանչյուր տնտեսություն իր արտադրանքը սպառում է իր տնտեսության ներսում: Համայնքաբնակների մի մասը զբաղվում է մեղվաբուծությամբ, սակայն տարիների կտրվածքով մեղվի համար եղանակային պայմանները լավ են լինում մեկընդմեջ:

Համայնքաբնակները իրենց տնամերձ հողամասերում աճեցնում են բանջարաբոստանային կուլտուրաներ և բազմատեսակ պտուղներ, սակայն ոռոգվում է համայնքի ոռոգելի տարածքի միայն տնամերձ հողամասերը:

Հավելված 6-ում ներկայացված է համայնքում առկա անասնազվիսաքանակի վերաբերյալ տվյալներն:

1.10 ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԲՆԱԿԱՆ ՄԻՋՎԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Համայնքում իրականացվում է կենտրոնացված աղբահանում:

Համայնքը չունի կոյուղու կոլեկտոր:

Համայնքում բնության և շրջակա բնական միջավայրի պահպանության բնագավառում անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- կառուցել կոյուղու գլխավոր կոլեկտոր,
- ավելացնել գյուղի կանաչապատ տարածքները,
- աղբի նախնական տեսակավորման համար փողոցներում ավելացնել աղբամանների թիվը,
- համայնքի փողոցներում իրականացնել ծառատունկ,
- ավելացնել համայնքի կանաչապատ և ծաղկապատ տարածքները,
- ներգրավել համայնքի բնակչությանը բնապահպանական խնդիրների լուծման գործընթացում՝ հասարակական կազմակերպությունների հետ համատեղ պարբերաբար անցկացվող սեմինարների, դասընթացների, տեսագրվագրների, ցուցանակների և հանրային իրազեկման այլ միջոցներով:

1.11 ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Քեթի համայնքն ունի 12 կմ երկարությամբ ներհամայնքային ճանապարհներ, ճանապարհները հիմնականում գրունտային և խճապատ են, որոնք էլ լինելով թեքությունների վրա, հաճախակի տեղացող հորդառատ անձրևների պատճառով ողողվում և քայքայվում են: Համայնքի տարածքում ճանապարհներից ասֆալտապատ է միայն՝ Երևան-Գյումրի-Վրաստանի սահման միջպետական Մ-1 ճամնապարհի համայնքի տարածքում գտնվող հատվածը:

Համայնքում ներկա պահին գործում է Գյումրի-Քեթի միկրոավտոբուսային երթուղին:

Համայնքում կան թվով 4 կանգառներ:

Համայնքաբնակների սեփականությունը հանդիսացող տրանսպորտային միջոցների նկարագիրն ու քանակները ներկայացված են **հավելված7**-ում:

1.12 ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքում առևտուրն իրականացվում է անհատ ձեռնարկատերերի կողմից: Համայնքում գործում են թվով 3 խառը խանութներ:

Համայնքում չկան գործող ոչ կառավարական կազմակերպություններ (ՀԿ-ներ, հիմնադրամներ, քաղաքական կուսակցություններ և այլն):

1.13 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Քեթի համայնքում գործում է հանրակրթական միջնակարգ 1 դպրոց, որը հիմնանորոգվել է 1999թ-ին, իսկ 2010թ. մարզադահլիճի մասը: Դպրոցը ջեռուցվում է էլեկտրատենների միջոցով, որը ծախսատար է և անարդյունավետ: Համայնքում նախակրթական հաստատությունը չի գործում երեխաների փոքր թվի պատճառով, դպրոցին կից գործում է նախակրթարան:

Աղյուսակ 12-ում ներկայացված է վերը նշված ուսումնական հաստատությունում աշխատողների և ուսուցանվող երեխաների վերաբերյալ տեղեկատվություն:

Աղյուսակ 12. Քեթի համայնքի դպրոցի և կից նախակրթարանի վերաբերյալ ցուցանիշները

Հ/հ	Ցուցանիշները	Ընդամենը համայնքում
1.	Դպրոցներում աշխատողների թիվը, որից՝ Մանկավարժներ	22 19
2.	Աշակերտների թիվը	79
3.	Նախակրթարանում աշխատողների թիվը	2
4.	Նախակրթարան հաճախող երեխաների թիվը	12

1.14 ՄՇԱԿՈՒՅԹ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Համայնքը չունի մշակույթի տուն: Գործում է միայն գրադարան և փոքր խաղասենյակ: Համայնքի դպրոցում գործում է պարի խումբ: Երեխաների մի մասն էլ այցելում են Գյումրիում գտնվող երաժշտական և արվեստի դպրոցներ:

1.15 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ, ՄՊՈՐՏ

Համայնքում գործում է բուժկետը, 1 ընտանեկան բժիշկ և 2 բուժքույր: Տեղի ունեցող հիմնական դեպքերի ժամանակ շտապ օգնությունը հասնում է Ախուրյան նախկին շրջկենտրոնից անցնելով Գյումրի քաղաքի միջով՝ ընդամենը անցնելով մոտ 20 կմ, որի պատճառով կանչերը սպասարկվում են բավականին ուշացումով:

Դպրոցում գործում է կարատեի խմբակը: Շատ երեխաներ հիմնականում ներգրավված են ձմեռային մարզաձևերի դպրոցում ինչպես նաև բոնցքամարտի և ծանրամարտի պարապունքներում, որտեղ գրանցվել են հաջողություններ:

Դպրոցի մարզադահլիճը վերանորոգված է և ապահովված է մարզագույքով:

1.16 ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏԻՆԵՐ, ԶԲՈՍՍՅԳԻՆԵՐ, ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿՆԵՐ, ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ

Համայնքում կառուցվել է փոքրիկների համար խաղահրապարակ՝ Վորլդ Վիժն Հայաստանի և համայնքի միջոցներով:

1.17 ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Աղյուսակ 14-ում ներկայացված են համայնքում եղած աշխատունակ և գործազուրկ մարդկանց, նպաստառու ընտանիքների, հաշմանդամների և ծնողազուրկ ու հաշմանդամ երեխաների վերաբերյալ ցուցանիշներ:

Աղյուսակ 14. Տաթև համայնքի աշխատունակների և գործազուրկների, նպաստառու ընտանիքների, հաշմանդամների և ծնողազուրկ ու հաշմանդամ երեխաների վերաբերյալ ցուցանիշներն ըստ բնակավայրերի

Հ/հ	Ցուցանիշները	Ընդամենը համայնք
1.	Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	
2.	Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ	
3.	Հաշմանդամներ, այդ թվում՝	
4.	Մանկուց հաշմանդամներ	
5.	Աշխատունակներ	
6.	Զբաղվածներ	
7.	Գործազուրկներ	
8.	Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը	

1.18 ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ

Համայնքապետարանը ստեղծել է իր պաշտոնական վեբկայքը՝ www.keti.am, որի նպատակը բնակչությանը համայնքի կառավարման վերաբերյալ իրազեկումն է, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով ամրագրված հրապարակայնության և թափանցիկության ապահովումը, տեղական իշխանություն-բնակչություն կապի ամրապնդումը և բնակչության շրջանում տեղական իշխանության նկատմամբ վստահության բարձրացումը: Սակայն, կայքում տեղական ինքնակառավարման վերաբերյալ տեղեկատվության առկայությունը դեռևս հեռու է բավարար լինելուց և անհրաժեշտ է բարելավել կայքի աշխատանքը, բարձրացնել օպերատիվությունը: Համայնքապետարանում տեղադրված է տեղեկատվական ցուցատախտակներ, որոնց միջոցով ապահովվում է համայնքի ղեկավարի եւ ավագանու կայացրած որոշումների հրապարակայնությունը:

1.19 ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում քաղաքացիական պաշտպանության կազմակերպումը, կառավարումը հանդիսանում է համայնքային

իշխանության կողմից պարտադիր կատարվող գործառույթ: Համայնքային իշխանության ենթակառուցվածքների ներգրավմանը զուգահեռ, Քաղաքաշտպանության շտաբի մեջ ներառված ծառայությունները ներկայացնում են համայնքային այլպատկանելիության, մասնավոր հատվածի մի շարք կազմակերպություններ (կապի, տրանսպորտի, բժշկական, սանիտար-հիգիենիկ ծառայությունների և այլոլորտներից), առանց որոնց անհնար է քաղաքաշտպանության շտաբի ֆունկցիոնալ գործունեության արդյունավետ ապահովումը:

Քեթի համայնքի քաղաքաշտպանության շտաբի պետն ի պաշտոնե համարվում է համայնքապետը, որի անմիջական հանձնարարությամբ գործում են քաղաքաշտպանության շտաբի առանձին ծառայությունները՝ ծառայությունների պետերի համակարգմամբ:

Արտակարգ իրավիճակներում փրկարարական աշխատանքների իրականացման գործում բնակչության էվակուացման համար մշակված է պլան, համապատասխան որի, բնակելի, հասարակական շենքերի, մյուս շենքերի ու շինությունների համար նախատեսված է հարմարավետ մոտեցումներով աշխատանքների տարհանման կոմունիկացիոն սխեմաներ:

Համայնքում գործում է համայնքային արձագանքման թիմ համատեղ Հայկական կարմի խաչի կազմակերպության հետ, որն ունի առջնային օգնության անհրաժեշտ գույք և համապատասխան պատրաստվածություն:

1.20 ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Համայնքի գործարար միջավայրի ձևավորումն ապահովող և հետագայում այդ միջավայրը զարգացնող կազմակերպությունների մասին տեղեկատվությունը ներկայացված է **ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ** բաժնում:

Համայնքի իրավիճակի բնութագրման և գնահատման ընդհանուր և ոլորտային հիմնական ցուցանիշները ներկայացված են **հավելված 1**-ում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Համայնքի իրավիճակի վերլուծության արդյունքում վեր են հանվել մի շարք հիմնահարցեր, որոնք ամփոփ կերպով ներկայացված են ստորև.

- ✓ Կոյուղու կոլեկտորի բացակայություն
- ✓ Ոռոգման համակարգի անբավարար վիճակ
- ✓ Համայնքի խնդիրների լուծման գործընթացում բնակչության ներգրավվածության ցածր մակարդակ
- ✓ Գյուղմթերքների իրացման դժվարություններ
- ✓ Համայնքում քաղաքաշինական փաստաթղթերի մշակման անհրաժեշտություն
- ✓ Խմելու ջրի ներհամայնքային ցանցերի հիմնանորոգման անհրաժեշտություն
- ✓ Ոռոգման ջրանցքի արտաքին և ներհամայնքային ցանցերի վերանորոգման և նոր ցանցի կառուցման անհրաժեշտություն
- ✓ Ներհամայնքային ճանապարհների և փողոցների վերանորոգման անհրաժեշտություն
- ✓ Արոտավայրերում ջրելատեղերի (ջրախմոցեր և խողովակաշար) վերանորոգման և կառուցման և ջրարբիացման անհրաժեշտություն
- ✓ Համայնքի երեխաների և երիտասարդների գիտելիքների (ժամանակակից տեխնոլոգիաներ) բարձրացման անհրաժեշտություն
- ✓ Գերեզմանատան ցանկապատման անհրաժեշտություն

- ✓ Համայնքային կենտրոնի լրակառուցման անհրաժեշտություն
- ✓ Ներհամայնքային գազաբաշխիչ ցանցի ընդլայնում
- ✓ Համայնքային արարողությունների սրահի վերակառուցում
- ✓ Դպրոցի գազաֆիկացում, ջեռուցման լոկալ համակարգի կառուցում
- ✓ Եկեղեցու կառուցում
- ✓ Աղբամանների թվի ավելացում
- ✓ Փողոցային լուսավորության ցանցի ընդլայնում

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԹՅՎ-ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԹԵՂ ԿՈՂՄԵՐԸ

Համայնքի ուժեղ կողմերն են՝

- ✓ Համայնքի աշխարհագրական դիրքը ռազմավարական նշանակություն ունի. գտնվում է Երևան-Գյումրի-Վրաստանի սահման միջպետական ճանապարհի վրա
- ✓ Գյուղտեխնիկայի բավարար ապահովվածություն
- ✓ Բնակչության կրթական-մասնագիտական բարձր մակարդակը
- ✓ Կենցաղային պայմանների բարվոք վիճակ
- ✓ Գազաֆիկացված լինելը
- ✓ Հակակարկտային 3 կայանների առկայություն
- ✓ Փողոցային լուսավորություն
- ✓ Աղբահանություն
- ✓ Մարզկենտրոնին մոտ գտնվելը
- ✓ Շուրջօրյա ջրամատակարարումը

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

Համայնքի թույլ կողմերն են՝

- ✓ Գործազրկության բարձր մակարդակը և աշխատատեղերի պակասը
- ✓ Համայնքի ենթակառուցվածքների (փողոցներ, ջրամատակարարման ցանցեր, ոռոգման ներքին ցանցի, ոռոգման ջրանցքի) ոչ բարվոք վիճակը
- ✓ Մշակույթի տան բացակայություն
- ✓ Համայնքային կենտրոնի բացակայություն
- ✓ Համայնքի ոչ լրիվ գազաֆիկացված լինելը
- ✓ Արարողությունների սրահի բացակայություն
- ✓ Կլիմայական խիստ պայմանները
- ✓ Բնակավայրի փոփոխությունը
- ✓ Գյուղմթերքների ընդունման և վերամշակման կետերի բացակայությունը
- ✓ 1988թ. երկրաշարժի հետևանքների ոչ լրիվ վերացումը (անօթևաններ, վթարային կառույցներ)

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համայնքի զարգացման հնարավորություններն են՝

- ✓ Գյուղմթերքների վերամշակման փոքր արտադրությունների ընդլայնման հնարավորությունը
- ✓ Անասնապահության և դաշտավարության զարգացումը
- ✓ Ագրոտուրիզմի զարգացում, խթանում

ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՅՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՎՏԱՆԳՆԵՐԸ

Համայնքին սպառնացող հիմնական վտանգներն են՝

- ✓ Բնական տարերային աղետների հնարավոր պատճառած վնասները (երկրաշարժ, երաշտ, կարկտահարություն, ուժեղ քամիներ, ձնաբուք, ցրտահարություն, սողանքների առաջացում)
- ✓ Գործազրկության մակարդակի աճը
- ✓ Արտագնա աշխատանքների մեկնողների մեծ թիվը
- ✓ Արտագաղթը
- ✓ Գյուղտեխնիկայի մաշվածությունը, հատկապես հացահատիկային կոմբայնների

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Քեթի տարածքային և տնտեսական զարգացման գործում կարևոր է հաշվի առնել համայնքի բնակչության հեռանկարային աճը, որը ելնում է համայնքի հեռանկարային տարածքային զարգացման հաշվարկված հնարավորություններից:

Քեթի համայնքում աշխատատեղերի մեծ քանակ կարելի է ակնկալել բնական ռեսուրսների, հիմնականում հումքային, սպասարկման ոլորտի, գյուղատնտեսության հնարավորությունները ռացիոնալ օգտագործելով: Զարգացման հիմնական ուղղությունների իրականացման գործընթացում խիստ կարևորվում է տեղական իշխանությունների, համայնքի բնակչության, քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների և գործարարների համատեղ գործունեությունը, ինչպես նաև համագործակցությունը պետության և դոնոր կազմակերպությունների հետ:

2. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԻ, ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԶՀԾ-Ի ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Համայնքի տեսլականն է՝

Նշված տեսլականին հասնելու համար համայնքը որդեգրել է հետևյալ **ռազմավարությունը՝**

- ✓ Ապահովել համայնքի զարգացումը
- ✓ Տարեցտարի բարելավել համայնքի ֆինանսական դրությունը՝ իրականացնելով համայնքի բյուջեի հարկային եկամուտների գանձման, ոչ հարկային եկամուտների, տեղական տուրքերի ու վճարների սահմանման և գանձման արդյունավետ քաղաքականություններ
- ✓ Ըստ ամենայնի խթանել ձեռներեցությունը՝ այն սերտորեն կապելով համայնքի տնտեսական զարգացման հետ
- ✓ Պահպանել համայնքի ճարտարապետության արդի ոճը, բացառել ինքնակամ շինարարությունը և ապօրինի հողազավթումները
- ✓ Խթանել համայնքային տարբեր շահագրգիռ կողմերի, դոնոր կազմակերպությունների, հասարակական և բարեգործական կազմակերպությունների, անհատների նախաձեռնությունները և նրանց ներգրավմամբ հետևողականորեն իրականացնել բարեփոխումներ՝ նպաստելով համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը
- ✓ Սերտորեն համագործակցել համայնքի բնակչության, քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների և գործարարների հետ
- ✓ Նպաստել համայնքում աշխատատեղերի ընդլայնմանը՝ ռացիոնալ օգտագործելով բնական ռեսուրսները, զարգացնելով գյուղատնտեսությունը

- ✓ Բարձրացնել բնակչության կենսամակարդակը՝ ընդլայնելով մատուցվող հանրային ծառայությունների որակն ու շրջանակը
- ✓ Համայնքի զարգացման 2017-2021թթ. հնգամյա ծրագրի հիմնական նպատակներն են՝
- ✓ Ունենալ բարեկարգ և լուսավոր ներհամայնքային ճանապարհներ և փողոցներ
- ✓ Բարելավել համայնքապետարանի և վարչական նստավայրի շենքային և գույքային պայմանները
- ✓ Բարելավել խմելու ջրի ջրամատակարարման ծառայությունների որակը
- ✓ Ունենալ մաքուր շրջակա միջավայրով համայնք՝ չխախտելով բնության և շրջակա միջավայրի սանիտարահիգիենիկ վիճակը, խուսափել հիվանդություններից և համաճարակներից
- ✓ Համայնքը դարձնել ավելի հետաքրքիր, հրապուրիչ և հարմարավետ զբոսաշրջիկների համար
- ✓ Ունենալ հարթ և բարեկարգ ճանապարհներ՝ նպաստելով գյուղի զարգացմանը
- ✓ Ակտիվացնել համայնքի մշակութային կյանքը
- ✓ Ունենալ բարեկարգ և մարմնամարզական գործիքներով հագեցած գործող սպորտային ենթակառուցվածքներ
- ✓ Ունենալ բարեկարգ զբոսայգիներ
- ✓ Ստեղծել համայնքում հանդիսություններ կազմակերպելու բավարար պայմաններ
- ✓ Արդյունավետ օգտագործել ռոռզման ջրի պաշարները
- ✓ Նպաստել գյուղատնտեսական աշխատանքների հեշտացմանը՝ ունենալով համապատասխան տեխնիկա
- ✓ Նպաստել կենդանիների մթերատվության բարձրացմանը

**3. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ (ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ)
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ, ՄԻԶՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒ ՄԻԶՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ**

**4. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄ, ԳՆԱՀԱՏՈՒՄ
ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ**

Համայնքի բյուջեի մուտքերը, կարելի է ասել, ձևավորվում են բացառապես վարչական բյուջեի միջոցների հաշվին: Համայնքում գալիք հինգ տարիներից միայն 2019թ. է նախատեսվում ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերի ստացում, այն էլ փոքր գումարի չափով:

Վարչականբյուջեիեկամուտներըձևավորվումենսահմանափակվովեկամտատեսակների՝ հարկերի, տեղական տուրքերիևգույքի վարձակալությունից եկամուտների հաշվին: Համայնքի բյուջեի կանխատեսվող եկամուտների մեծ մասը (2016թ.՝ 81.3%, 2017թ.՝ 74.1%, 2018թ.՝ 75.7%, 2019թ.՝ 74.4%, 2020թ.՝ 76.5%,) ձևավորվում են պետական բյուջեից համայնքներիև տրամադրվող ֆինանսականհամահարթեցմանդոտացիաներիհաշվին(աղյուսակ 15):

Քանի որ համայնքի բյուջեի ֆոնդային մասում մուտքեր գրեթե չեն կանխատեսվում, ապա պլանավորվող հինգ տարիների կապիտալ ծախսերը մեծամասամբ կիրականացվեն համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումների և տարեսկզբի ազատ մնացորդի հաշվին:

Աղյուսակ 15. Համայնքի 2015-2016թթ. բյուջեների մուտքերի ցուցանիշները և 2017-2021թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը հազար դրամ

Հ/հ	Մուտքերի անվանումը	2015թ. փաստ.	2016թ. փաստ.	2017թ. նախ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.
	ԲՅՈՒՋԵՏՍՅՅՒՆ ՄՈՒՏՔԵՐ` ԸՆԴԱՄԵՆԸ (I+II+III)*							
I.	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (1+2+3)*							
1	ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ							
1.1	Գույքային հարկեր անշարժ գույքից							
	Գույքահարկ շենքերի և շինությունների համար							
	Հողի հարկ							
1.2	Գույքային հարկեր այլ գույքից							
	Գույքահարկ փոխադրամիջոցների համար							
1.3	Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ							
	Տեղական տուրքեր							
1.4	Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ							
	Պետական տուրքեր							
1.5	Այլ հարկային եկամուտներ							
	Այլ հարկերից և պարտադիր վճարներից կատարվող մասհանումներ							
	Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ, որոնք չեն հաշվարկվում այդ հարկերի գումարների նկատմամբ							
2	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ							
2.1	Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ							
2.2	Վապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ							
2.3	Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ							
ա)	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ							
բ)	Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ							
գ)	Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ							

	(սուբվենցիաներ)							
դ)	ՀՀ այլ համայնքների բյուջեներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ							
2.4	Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ							
ա)	Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)							
բ)	ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ							
3	ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ*							
3.1	Տոկոսներ							
3.2	Շահաբաժիններ							
3.3	Գույքի վարձակալությունից եկամուտներ							
	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ							
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ							
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ							
	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր							
3.4	Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, այդ թվում							
	Պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ							
3.5	Վարչական գանձումներ							
	Տեղական վճարներ							
	Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ							

	Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) վճարներ							
3.6	Մուտքեր տույժերից, տուգանքներից							
	Վարչական իրավախախտումների համար ՏԻՄ-երի կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ							
	Մուտքեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց գանձվող տույժերից							
3.7	Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ							
3.8	Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ							
3.9	Այլ եկամուտներ*							
	Համայնքի գույքին պատճառած վնասների փոխհատուցումից մուտքեր							
	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր							
	Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ							
II.	ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (1+2+3+4)							
1	Հիմնական միջոցների իրացումից մուտքեր							
	Անշարժ գույքի իրացումից մուտքեր							
	Շարժական գույքի իրացումից մուտքեր							
	Այլ հիմնական միջոցների իրացումից մուտքեր							
2	Պաշարների իրացումից մուտքեր							
3	Բարձրարժեք ակտիվների իրացումից մուտքեր							
4	Չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր							
	Հողի իրացումից մուտքեր							
	Ոչ նյութական չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր							
III.	ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵԼՈՒՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ							

	ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՍ ՊԱԿԱՍՈՒՐԴԻ (ԴԵՖԻՑԻՏԻ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂՔՑՈՒՐՆԵՐԸ (Ա+Բ)						
Ա.	ՆԵՐՔԻՆ ԱՂՔՑՈՒՐՆԵՐ (1+2)						
1	ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ						
1.1	Արժեթղթեր						
	-թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր						
	-հիմնական գումարի մարում						
1.2	Վարկեր						
	-վարկերի ստացում						
	-ստացված վարկերի հիմնական գումարի մարում						
1.3	Փոխատվություններ						
	-բյուջետային փոխատվությունների ստացում						
	-ստացված փոխատվությունների գումարի մարում						
2	ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ						
2.1	Բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն						
	-համայնքային սեփականության բաժնետոմսերի և կապիտալում համայնքի մասնակցության իրացումից մուտքեր						
	-իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից առաջացած միջոցներից համայնքի բյուջե մասհանումից մուտքեր						
	-բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն ձեռքբերում						
2.2	Փոխատվություններ						
	-նախկինում տրամադրված փոխատվությունների դիմաց ստացվող մարումներից մուտքեր						
	-փոխատվությունների տրամադրում						
2.3	Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը						
2.4	Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցների տրամադրում վարչական մաս						
2.5	Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցներից վարչական մաս տրամադրված միջոցների վերադարձ ֆոնդային մաս						
2.6	Համայնքի բյուջեի հաշվում միջոցների մնացորդները հաշվետու ժամանակահատվածում						

	որից՝ ծախսերի ֆինանսավորմանը չուղղված համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդի գումարը						
Բ.	ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ						
1	ՓՈՒՍԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ						
1.1	Արժեթղթեր						
	-թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր						
	-հիմնական գումարի մարում						
1.2	Վարկեր						
	-վարկերի ստացում						
	-ստացված վարկերի հիմնական գումարի մարում						
1.3	Փոխատվություններ						
	-փոխատվությունների ստացում						
	-ստացված փոխատվությունների գումարի մարում						

*)Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջեի հատկացվող գումարը չի մտնում բյուջեի տային ընդհանուր եկամուտների մեջ

Համայնքի բյուջեի 2020թ. մուտքերի մի մասը՝ 53 720.0 հազար դրամը նախատեսվում է տեղափոխել որպես 2021թ. բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդ:

5. ՀԱՄԱՅՆՔԻ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԻ ԿԱԶՄՈՒՄ ԵՎ ԱՌԱՋԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ, ՖԻՆԱՆՍԱՊԵՍ ԱՊԱՀՈՎՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԱՄՓՈՓՈՒՄ, ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՅԹԱՅԹՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Ելնելով համայնքի իրավիճակի վերլուծության և գնահատման արդյունքներից, համայնքում ներկայումս արձանագրված հիմնախնդիրներից, համայնքի զարգացման՝ ՏԻՄ-ի կողմից ընտրված ազգայնականության իրականացման համար սահմանված հիմնական նպատակներից, ՀԶՀԾ-ի կառավարման ՀԱԽ-երի և ԽՄ-ի կողմից քննարկվել և որոշվել է առաջարկվող ծրագրերից անկը (աղյուսակ 16)՝ ընդգրկելու համայնքի 2017-2021 թթ. ՀԶՀԾ-ում: Այդ ծրագրերի մի մասի իրականացումը համարվում է տեղական ինքնակառավարման մարմինների լիազորություն, իսկ մյուս մասը դուրս է վերջիններիս լիազորությունների շրջանակից, սակայն դրանց իրականացումը խիստ կարևոր նշանակություն ունի բնակչության բարեկեցությունը և համայնքի համալիր ու առաջանցիկ զարգացումը ապահովելու համար:

ՀԱՆ-ի կողմից առաջարկվող ծրագրերի ցանկ՝ ՀԶՏ-ում ընդգրկելու համար

Աղյուսակ 16.1 Պարտադիր իրականացվող ծրագրերի ցանկ

Հ/հ	Համայնքի անվանումը	Ծրագրի անվանումը	Ծրագրի ընդհանուր արժեքը (հազ. դրամ)
	Քեթի	<i>ՏԻՄ-երի լիազորություններ</i>	
1		Ոռոգման ներքին ցանցի կառուցում	15000.0
2		Համայնքային կենտրոնի լրակառուցում	
3		Արարողությունների սրահի վերակառուցում	
4		Եկեղեցու կառուցում	
5		Հակակարկտային կայանների ավելացում	
6		Խմելու ջրի ցանցի մասնակի նորոգում	
7		Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում /խճապատում/	
8		Գերեզմանատան պարապապատում	
9		Արոտների ջրարբիացում	
		<i>ՏԻՄ-երի լիազորություններից դուրս ծրագրեր</i>	
10		Դպրոցի գազաֆիկացում, ջեռուցման լոկալ համակարգի ստեղծում, դռների և պատուհանների փոխարինում	
11		Ոռոգման ջրանցքի հիմնանորոգում	
12		Գազաբաշխիչ ցանցի ընդլայնում	
13		Մշակույթի տան կառուցում	
14		Կոյուղու կոլեկտորի կառուցում	

Ծրագրերի առաջնահերթությունների որոշում

Ըստ համայնքի ծրագրերի ցանկը սահմանելուց հետո դրանք գնահատվել են ըստ առաջնահերթության՝ հիմք ընդունելով հետևյալ չափորոշիչները.

- ✓ Շահառուների թիվ
- ✓ Համայնքի կարողությունների հզորացում
- ✓ Իրատեսականություն
- ✓ Հրատապություն

Ըստ սահմանված չափորոշիչների ծրագրերը գնահատվել են առավելագույնը 10 բալանոց սանդղակով: Գնահատականները ներկայացված են աղյուսակ 17-ում:

Աղյուսակ 17 Քեթի համայնքի ծրագրերի առաջնահերթությունների որոշում

Հ/հ	Համայնքի անվանումը	Ծրագրի անվանումը	Ծրագրի ընդհանուր արժեքը (հազ. դրամ)	Գնահատման չափանիշներ (0-10 բալ)				Ընդամենը (բալ)	Ծրագրի առաջնահերթությունը
				Շահառուների թիվ	Համայնքի կարողությունների հզորացում	Իրատեսակականություն	Գրատապանություն		
	Քեթի	ՏԻՄ-երի լիազորություններ							
1		Ոռոգման ներքին ցանցի կառուցում							
2		Համայնքային կենտրոնի լրակառուցում							
3		Արարողությունների սրահի վերակառուցում							
4		Եկեղեցու կառուցում							
5		Հակակարկտային կայանների ավելացում							
6		Խմելու ջրի ցանցի մասնակի նորոգում							
7		Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում /խճապատում/							
8		Գերեզմանատան պարսպապատում							
9		Արոտների ջրարբիացում							
		ՏԻՄ-երի լիազորություններից դուրս ծրագրեր							
10		Դպրոցի գազաֆիկացում, ջեռուցման լոկալ համակարգի ստեղծում, դռների և պատուհանների փոխարինում							
11		Ոռոգման ջրանցքի հիմնանորոգում							
12		Գազաբաշխիչ ցանցի ընդլայնում							
13		Մշակույթի տան կառուցում							
14		Կոյուղու կոլեկտորի կառուցում							

Առաջնահերթ ծրագրերի ընտրություն, համայնքի ոլորտային ծրագրերի ամփոփագրերի կազմում

Ծրագրերի առաջնահերթությունները՝ ՀԱԽ-ի կողմից սահմանվելուց հետո ընտրվել և համայնքի ոլորտային ծրագրերի ամփոփագրերում ներկայացվել են ըստ առաջնահերթ ոլորտային այն ծրագրերը, որոնք գալիք 5 տարիների կանխատեսվող ֆինանսական միջոցների շրջանակներում հնարավոր կլինի իրականացնել: Ընդ որում, ծրագրերն ի սկզբանե առանձնացվել և ներկայացվել են ըստ հետևյալ խմբերի՝

✓ Պարտադիր իրականացվող ծրագրերի ցանկ

✓ Առկա համագործակցության շրջանակներում իրականացվող և ընթացքի մեջ գտնվող ծրագրերի ցանկ

Պարտադիր իրականացվող ծրագրերն ըստ առաջնահերթության չեն գնահատվել: Դրանք ի սկզբանե դիտարկվել են որպես առաջնահերթ և պարտադիր կատարման ենթակա: Այս մոտեցումը ցուցաբերվել է ելնելով այն տրամաբանությունից, որ անկախ այս կամ որևէ ծրագրի իրականացման կարևորությունից, համայնքում պետք է գործի աշխատակազմ և հետևաբար պետք է նախատեսված լինեն վերջինիս պահպանության հետ կապված ծախսեր:

Առկա համագործակցության շրջանակներում իրականացվող և ընթացքի մեջ գտնվող ծրագրերը նույնպես ըստ առաջնահերթության չեն գնահատվել: Պատճառն այն է, որ այդ ծրագրերն արդեն ընտրված և որոշված են եղել նախքան ՀԶՀԾ-ի մշակումը: Բացի այդ, նշյալ ծրագրերը ժամանակին ընտրելիս կիրառվել է բնակիչների մասնակցությունն ապահովող տարբեր գործիքակազմ և դրանք ընտրվել են՝ հաշվի առնելով համայնքի բնակիչների կարծիքը: Առկա համագործակցության շրջանակներում իրականացվող և ընթացքի մեջ գտնվող ծրագրերը ներկայացված է աղյուսակ 20-ում:

Ըստ բնակավայրերի ոլորտային ծրագրերը գնահատվել են ըստ առաջնահերթության: Ընդ որում, յուրաքանչյուր բնակավայրի ծրագրերը գնահատվել են առանձին՝ ըստ սահմանված չափորոշիչների: Այնուհետև, ընտրվել և համայնքի ոլորտային ծրագրերի աղյուսակում ներկայացվել է յուրաքանչյուր բնակավայրից առաջնահերթություն շահած այնքան ծրագիր, որքանի իրականացման համար բավարարում են գալիք 5 տարվա կանխատեսումների շրջանակներում տվյալ բնակավայրին բաժին հասնող ֆինանսական միջոցները: 5 տարվա կտրվածքով տվյալ բնակավայրին բաժին հասնող ֆինանսական միջոցների գումարի չափը որոշելու համար՝

11	Ոռոգման ջրանցքի հիմնանորոգում											
12	Գազաբաշխիչ ցանցի ընդլայնում											
13	Մշակույթի տան կառուցում											
14	Կոյուղու կոլեկտորի կառուցում											
	Ընդամենը											

6. ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ (ՇԵՆՔԵՐԻ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԵՎ ԱՅԼՆ) ԿԱՌԱՎԱՐՄԱՆ (ՕՏԱՐՄԱՆ, ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ) ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ

Համայնքի սեփականություն համարվող գույքի (այդ թվում՝ հողերի) ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2017-2021թթ. ընթացքում համայնքը չունի օտարման ենթակա որևէ շենք կամ շինություն: Առկա են միայն օտարման ենթակա հողամասեր, այն էլ՝ քիչ քանակությամբ (աղյուսակ 23):

Աղյուսակ 23. Համայնքի սեփականություն համարվող գույքի (շենքերի, շինությունների, հողամասերի հայլն) կառավարման (օտարման, վարձակալության տրամադրման) հնգամյա ծրագիրը, 2016-2020թթ.

Հ/հ	Գույքի անվանումը	Հասցեն	Տարածքը/ մակերեսը / քանակը (մ ² / հատ)	Վիճակի գնահատականը	Այլ բնութագրի չևեր	2017	2018	2019	2020	2021	Ենթակա օտարման, վարձակալության տրամադրման
1.											
2.											
3.											
4.											
5.											
6.											
7.											
8.											

7. ՀԶՀԾ-ԻԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ, ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ (ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ) ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ, ՎԵՐԱՀՄԿՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՆԱՑՈՒՄԸ

ՀԶՀԾ-ի իրականացումը

Համայնքի յուրաքանչյուր տարվա բյուջեի նախագծի կազմման ծրագրային հիմքը ՀԶՀԾ-ում համապատասխան տարվա համար նախատեսված ոլորտային համայնքային ծրագրերն են, որոնց իրականացման համար հաշվարկվել են ֆինանսավորման համապատասխան աղբյուրներն ծախսեր: Գործնականում, ՀԶՀԾ-ի իրականացումը հանգում է հիմնականում

(չհաշված ֆինանսավորման այլ աղբյուրների հաշվին նախատեսված ծրագրերը)

համայնքի գալիքի ինգտարիների բյուջեների կատարմանը:

ՀԶՀԾ-ում ներառված յուրաքանչյուր ոլորտային կամ բնակավայրային ծրագրի ղեկավարն անձնական պատասխանատվություն է կրում ծրագրով նախատեսված աշխատանքների համակարգման, համապատասխան ծախսերի կատարման, արդյունքների ստացման, հաշվետվությունների պատրաստման և համայնքի ղեկավարին ներկայացման համար:

Հիմք ընդունելով համայնքի 2017-2021 թթ. ֆինանսապես ապահովված ընդհանուր և ոլորտային ծրագրերի ամփոփագիրը (աղյուսակ 21) և հավելված 10-ում ներկայացված համայնքի ոլորտային ծրագրերի նկարագրերը, **հավելված 11-ում** ներկայացվում է ՀԶՀԾ-ի ոլորտային ծրագրերի իրականացման տեղեկատվությունը ըստ ՏԻՄ-երի գործունեության առանձին ոլորտների:

ՀԶՀԾ-ի մշտադիտարկումը (մոնիթորինգը)

